

Հաստատում եմ՝
 Դպրոցի տնօրեն՝
 Հ. Բարսեղյան

<< ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի
 թիվ 3 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ
 ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԼԱԲՈՐԱՆՏ
 ՊԱՇՏՈՆԻ ՆԿԱՐԱԳԻՐ
 Սուսաննա Մովսիսյան

Դերը	Լաբորատորիայի լաբորանտը լուծում է քիմիայի, ֆիզիկայի բնագավառների հետազոտություններին, ինչպես նաև այլ ոլորտների հետազոտությունների արդյունքների գործնական կիրառմանն առնչվող տեխնիկական խնդիրներ:
Խնդիրների բնագավառը և աշխատանքային գործընթացները	
Բնագավառ 1.	Կազմակերպական աշխատանքներ
Աշխատանքային գործառույթները	<p>-Լաբորատորիայի լաբորանտը նախապատրաստում և ապահովում է առարկայական ծրագրով նախատեսված լաբորատոր աշխատանքները,</p> <p>-նախապատրաստում, հավաքում, մշակում և կուտակում է ելակետային տվյալներ, նմուշներ, տիպօրինակներ և նյութեր՝ հետազոտությունների, փորձերի և վերլուծությունների համար,</p> <p>-նախապատրաստում, ստուգում և կարգաբերում է լաբորատոր սարքավորումները, ապարատները՝ փորձերի անցկացման համար,</p> <p>-մասնակցում է հետազոտություններ և փորձեր կատարելուն, դրանց արդյունքները վերլուծելուն և մշակելուն, կատարում է տարբեր հաշվողական և գրաֆիկական աշխատանքներ, դիտարկումներ, գրանցում սարքերի ցուցանիշները, վարում աշխատանքային մատյանները,</p> <p>-որոշում է նախագծերի իրացման համար անհրաժեշտ նյութական և աշխատանքային ծախսերի ծավալները,</p> <p>-կիրառում է հետազոտությունների և փորձերի ընթացքում ծագող խնդիրները լուծելու համար տեխնիկական գիտելիքներ,</p> <p>-կազմակերպում է սարքավորումների սպասարկում և նորոգում,</p> <p>-ապահովում է ստորաբաժանման աշխատակիցներին՝ աշխատանքի համար անհրաժեշտ սարքավորումներով, նյութերով, ռեակտիվներով և այլն,</p> <p>-լաբորատոր փորձերից առաջ սովորողներին պարզաբանում է տվյալ աշխատանքի անվտանգության կանոնները և դասավանդող դասախոսի հետ համատեղ ապահովում դրանց կատարումը,</p> <p>-իրականացնում է կապ գրադարանի հետ՝ անհրաժեշտության դեպքում ամբիոնի լաբորատորիան ուսումնամեթոդական գրականությամբ ապահովելու նպատակով,</p> <p>-մասնակցում է ամբիոնի լաբորատորիայի ցուցափեղկերի ու վահանակների ձևավորման աշխատանքներին,</p> <p>Սահմանված կարգով իր անմիջական ղեկավարին է ներկայացնում հաշվետվություն՝ իր կատարած աշխատանքների մասին</p> <p>Պատասխանատվություն է կրում համակարգման իր ոլորտում իրականացվող աշխատանքների իրականացման և հսկման համար: Այդ աշխատանքների կազմակերպման ժամանակ գործում է ինքնուրույնաբար՝ առաջնորդվելով գործող իրավական ակտերով և կարգերով, ինչպես նաև անմիջական ղեկավարի հանձնարարականներով:</p> <p>Լաբորատորիայի լաբորանտը պետք է իմանա.</p> <p>-իր կողմից համակարգվող աշխատանքների կազմակերպման կիրականացման ձևերն ու սկզբունքները,</p> <p>-ոլորտի նորմատիվ իրավական հենքը</p>

VII ԴԱՍԱՐԱՆ

N	ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ	ԱՆՀՐԱԺԵՇՏ ՍԱՐՔԵՐ
1.	Մարմնի երկարության, ծավալի և ջերմաստիճանի չափումը; Ձեռք բերել քանոնով, չափազևանով և ջերմաչափով չափումներ կատարելու հմտություններ, սովորել ճիշտ գրանցել չափման արդյունքները;	25սմ և ավելի չափման սահման ունեցող մմ-ական բաժանումով քանոն, չափազևան, ջրով լի բաժակ, ջերմաչափ;
2.	Մարմնի զանգվածի չափումը լծակավոր կշեռքով; Սովորել լծակավոր կշեռքով կշռելու կանոնները և որոշել մարմինների զանգվածները;	Կշեռք, կշռաքարեր, տարբեր զանգված ունեցող երեք ոչ մեծ մարմին/ցանկալի է աշակերտների ընտրությամբ/;
3.	Պինդ մարմնի խտության որոշումը; Կարողանալ որոշել պինդ մարմնի խտությունը;	Կշեռք և կշռաքարեր, ջրով լցված չափազևան, թելից կախված պինդ մարմին;
4.	Ուժի չափումը ուժաչափի միջոցով, սովորել ուժաչափով չափել տարբեր ուժեր;	Ուժաչափ, փայտե չորսու, բեռների հավաքածու, լավ հարթեցրած փայտե տախտակ, գլորաններ /կլոր մատիտներ/;
5.	Լծակի հավասարակշռության պայմանի ուսումնասիրումը; Փորձով ուսումնասիրել, թե՛ ուժերի և թե՛ դրանց բազուկների ինչ հարաբերության դեպքում լծակը կլինի հավասարակշռության մեջ;	Մարակալանին ամրացված լծակ, բեռների հավաքածու, քանոն;
6.	Թեք հարթությամբ մարմինը բարձրացնելիս ՕԳԳ-ի որոշումը; Համոզվել, որ թեք հարթության օգնությամբ կատարված օգտակար աշխատանքը փոքր է լրիվ աշխատանքից;	Ուժաչափ, ամրակալան, փայտե չորսու, չափաժապավեն, բեռների հավաքածու;
7.	Հեղուկի մեջ ընկղմված մարմինն արտանդող ուժի որոշումը; Որոշել ջրի մեջ ընկղմված մարմնի վրա ազդող արքիմեդյան ուժը;	Ուժաչափ, ջրով լցված չափազևան, պինդ մարմին;

--	--	--

VIII ԴԱՍԱՐԱՆ

N	ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ	ԱՆՀՐԱԺԵՇՏ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ
1.	Հավասարաչափ արագացող շարժման արագացման չափունք; Կարողանալ չափել այն արագացումը, որով շարժվում է գնդիկը թեք ճոռով;	Ճոռ, գնդիկ, ամրակալան կցորդիչով և թաթիկով, մետաղական գլան, չափաժապավեն, վայրկենաչափ;
2.	Մեխանիկական էներգիայի պահպանման օրենքի ուսումնասիրումը; Փորձականորեն ստուգել մեխանիկական էներգիայի պահպանման օրենքը;	Ճոռ, գնդիկ, ամրակալան կցորդիչով և թաթիկով, մետաղե գլան, չափաժապավեն, լծակավոր կշեռք, կշռաքարեր;
3.	Թելավոր ճոճանակի տատանումների ուսումնասիրումը; Ստուգել ճոճանակի պարբերության և հաճախականության կանխումը; Թելի երկարությունից որոշել պարբերությունը և հաճախականությունը;	Թելից կախված գնդիկ, ամրակալան կցորդիչով և օղակով, չափաժապավեն, ժամացույց կամ վայրկենաչափ;
4.	Փոքր մարմինների չափերի որոշումը; Սովորել այն մարմինների չափերը որոշելու եղանակները, որոնք շատ փոքր են և անմիջականորեն դրանց չափերը անհնար է որոշել;	Քանոն, ցորենի հատիկներ, գիրք, բարակ մետաղալար, կլոր մատիտ;
5.	Պինդ մարմնի տեսակարար ջերմունակության որոշումը փորձական եղանակով;	Կալորաչափ, ջերմաչափ, կշեռք, թելով կապված մետաղե գլան, տաք և սենյակային ջուր, ջուր պարունակող երկու անոթ;
6.	Ջրի եռման ջերմաստիճանի կանխումը, նրանում լուծված աղի առկայությունից; Պարզել եռման ջերմաստիճանը ինչպես է կախված նրանում լուծված աղի առկայությունից;	Մոտ 150 մլ թորած ջրով լի փորձանոթ, ջերմաչափ, ջեռուցիչ, 40-50գր կերակրի աղ

IX ԴԱՍԱՐԱՆ

N	ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ	ԱՆՀՐԱԺԵՇՏ ՍԱՐՔԵՐ և ՆՅՈՒԹԵՐ
1.	Հաղորդիչների դիմադրության չափումը ամպերմետրի և ոլտմետրի միջոցով;	Ակումյատորների մարտկոց, հետազոտվող հաղորդիչ/նիկելինե/ ամպերաչափ, վոլտաչափ, բանալի, միացնող հաղորդալարեր;
2.	Էլեկտրական լամպում եղած հոսանքի/ուժի/ հզորության և աշխատանքի չափումը; Որոշել հոսանքի աշխատանքն ու հզորությունը;	Ակումյատորի մարտկոց, ցածրավոլտ լամպ, տակդիր վրա վոլտաչափ, ամպերաչափ, բանալի, միացնող հաղորդալարեր, վայրկենաափ/կամ՝ ժամացույց վայրկենաչափով/;
3.	Հավաքել էլեկտրամագնիս պատրաստի դետալներից և փորձով ստուգել , թե ինչից է կախված դրա մագնիսական գործողությունը;	Երեք տարրերից կազմված մարտկոց, ռեստարտ բանալի, միացնող հաղորդալարեր, կողմնացույց, էլեկտրամագնիս հավաքելու դետալներ;
4.	Պատկերի ստացումը ոսպնյակի միջոցով; Սովորել հավաքող ոսպնյակի միջոցով ստանալ տարբեր պատկերներ;	Հավաքող ոսպնյակ, էկրան, լամպ թասակով, որում ճեղք է արված, չափաչապավեն;